

	LI 75-16-01-02	
	Պետական ծրագրի շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության և ՀՀ ոստիկանության սպայական անձնակազմերին կենցաղային տեխնիկայի ձեռքբերման նպատակով վարկերի տրամադրման կանոններ	Խմբագրություն՝ 01 Ուժի մեջ է՝ 04.05.2016թ.

Վարչության նախագահի 11.04.2016 թ. թիվ 19Լ հրամանի Հավելված 1

ԲԱԺԻՆ 1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

«**Բանկ**»՝ նշանակում է «Արդշինբանկ» ՓԲԸ:

«**Վարկ**»՝ նշանակում է Պայմաններին համապատասխան տրամադրվող վարկ:

«**Կազմակերպություն**»՝ նշանակում է կենցաղային տեխնիկայի վաճառք իրականացնող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր:

«**Հաճախորդ**»՝ նշանակում է Վարկ ստանալու նպատակով Պայմանների պահանջներին բավարարող Բանկ դիմած անձ :

«**Հայրուկ վարկային ծրագիր**»՝ նշանակում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2013

թվականի մայիսի 23-ի N 590-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության կրտսեր, միջին, ավագ և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության միջին, ավագ, գլխավոր սպայական անձնակազմին կենցաղային տեխնիկայի ձեռքբերմանն աջակցելու նպատակով Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերի կողմից սպառողական վարկերի տրամադրման հատուկ վարկային ծրագիրը:

«**Վարկառու**»՝ նշանակում է Բանկից Վարկ ստացած Հաճախորդը:

«**Երաշխավոր**»՝ նշանակում է Բանկի սահմանած պահանջներին բավարարող ֆիզիկական անձ, ով երաշխավորության պայմանագրով Բանկի առջև պարտավորվում է պատասխանատվություն կրել Վարկային պայմանագրով Վարկառուի կողմից իր պարտավորությունների լրիվ կամ մասնակի կատարման համար:

«**Երաշխավորություն**»՝ նշանակում է որպես Վարկային պայմանագրով Վարկառուի կողմից ստանձնած Պարտավորությունների կատարման ապահովման միջոց Երաշխավորի կողմից տրված երաշխավորություն:

«**Անձը հաստատող փաստաթուղթ**»՝ նշանակում է Վարկերի տրամադրման համար Բանկի կայքում հրապարակված՝ անհրաժեշտ փաստաթղթերի ցանկով սահմանված անձը հաստատող փաստաթղթեր :

«**Ընկերություն**»՝ նշանակում է «Բնակարան երիտասարդներին» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն» փակ բաժնետիրական ընկերությունը, որը Հատուկ վարկային ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության անունից կազմակերպում և իրականացնում է սուբսիդավորման գործընթացը, և որի հետ հարաբերությունները կարգավորվում են Բանկի և Ընկերության միջև կնքված սուբսիդավորման պայմանագրով:

«**Վարկային պայմանագիր**»՝ նշանակում է Հատուկ վարկային ծրագրի ներքո կենցաղային տեխնիկայի ձեռքբերման նպատակով Կանոններով և Պայմաններով սահմանված կարգով և պայմաններին համապատասխան Հաճախորդի առաջարկ-դիմումն ուղարկելու և Բանկի՝ դրա ակցեպտի միջոցով կնքված վարկային պայմանագիրը:

«**Երաշխավորության պայմանագիր**»՝ նշանակում է Հատուկ վարկային ծրագրի ներքո Կանոններով և Պայմաններով սահմանված կարգով և պայմաններին համապատասխան Երաշխավորի առաջարկ-դիմումն ուղարկելու և Բանկի դրա ակցեպտի միջոցով կնքված երաշխավորության պայմանագիրը:

«**Անվանական տոկոս**»՝ նշանակում է Վարկի օգտագործման համար Վարկային պայմանագրով նախատեսված տարեկան տոկոսադրույք:

«**Առաջարկ-դիմում**»՝ նշանակում է Վարկային և (կամ) Երաշխավորության պայմանագրի էական պայմանները պարունակող՝ Բանկին ներկայացվող Վարկային և (կամ) Երաշխավորության պայմանագրի կնքելու առաջարկ-դիմումը (օֆերտա պարունակող նամակը):

«**Ակցեպտ**»՝ նշանակում է Առաջարկ-դիմումն ընդունելու մասին Բանկի ակցեպտ պարունակող նամակը:

«**Պայմաններ**»՝ նշանակում է Վարկային պայմանագրի անբաժանելի մասը կազմող Պետական ծրագրի

 Ardshinbank	LI 75-16-01-02	
	Պետական ծրագրի շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ կառավարության առընթեր ազգային անվտանգության ծառայության և ՀՀ ոստիկանության սպայական անձնակազմերին կենցաղային տեխնիկայի ձեռքբերման նպատակով վարկերի տրամադրման կանոններ	Խմբագրություն՝ 01 Ուժի մեջ է՝ 04.05.2016թ.

շրջանակներում զինծառայողներին կենցաղային տեխնիկայի ձեռքբերման նպատակով վարկերի տրամադրման պայմանները:

«**Կանոններ**»՝ նշանակում է Վարկային պայմանագրի անբաժանելի մասը կազմող սույն կանոնները:

«**Սուբսիդավորման գումար**»՝ նշանակում է Վարկի տոկոսների մարմանն ուղղված գումարի սուբսիդավորում Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարության կողմից՝ Պայմաններով սահմանված չափով, որպես Հատուկ վարկային ծրագրին Հայաստանի Հանրապետության կառավարության մասնակցություն:

«**Սուբսիդավորման պայմանագիր**»՝ նշանակում է Հատուկ վարկային ծրագրի շրջանակներում Սուբսիդավորման գումարի օգտագործման կարգավորման նպատակով Ընկերության և Բանկի միջև կնքված պայմանագիրը:

«**Տոկոսների սուբսիդավորման կարգ**»՝ նշանակում է Հատուկ վարկային ծրագրի ներքո տրամադրված

Վարկերի տոկոսագումարների սուբսիդավորման գործընթացն իրականացնելու նպատակով Ընկերության և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության միջև 2013 թվականի հունիսի 28-ին կնքված փոխըմբռնման հուշագրի անբաժանելի մասը կազմող «Տոկոսների սուբսիդավորման կարգը»:

«**Ընթացիկ ժամանակացույց (գրաֆիկ)**»՝ Վարկային պայմանագրի անբաժանելի մասը կազմող վարկի մարման (վերադարձման) և տոկոսագումարների վճարման ժամանակացույցը (գրաֆիկը), որում նշված են մարման (վճարման) ենթակա Վարկի և Տոկոսագումարների չափերն ու մարման (վճարման) ժամկետները, ինչպես նաև տոկոսագումարի սուբսիդավորման դեպքում՝ սուբսիդավորման ենթակա գումարը և վարկառուի կողմից մարման ենթակա գումարը:

ԲԱՃԻՆ 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2.1. Բանկի կողմից Հաճախորդին Վարկ տրամադրելու համար Բանկի և Հաճախորդի միջև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 29-րդ գլխով սահմանված պայմանագրի կազմմանը ներկայացվող պայմանագրի ձևի և էական պայմանների պահպանմամբ կնքվում է Վարկային գրավոր պայմանագիր:

2.2. Վարկային պայմանագիրը կնքված, իսկ դրա գրավոր ձևը պահպանված է համարվում ակցեպտ պարունակող նամակը Բանկի կողմից Առաջարկ-դիմումում նշված էլեկտրոնային հասցեին ուղարկելու պահից: Վարկը տրամադրվում է Վարկային պայմանագիրը կնքվելուց հետո:

2.3. Հաճախորդի Առաջարկ-դիմումը թղթային կամ էլեկտրոնային եղանակով ստանալու օրվանից հետո Պայմաններում սահմանված վարկի տրամադրման ժամկետում Բանկը Հաճախորդի Առաջարկ-դիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկում է Ակցեպտ կամ կապի հնարավոր միջոցով իրազեկում է Հաճախորդին Առաջարկ-դիմումի մերժման և դրա պատճառների մասին:

2.4. Կանոնները և Պայմանները հանդիսանում են Վարկային պայմանագրի անբաժանելի մասը:

2.5. Կանոններն ու Պայմանները հրապարակվում են Բանկի կորպորատիվ www.ardshinbank.am ինտերնետային կայքէջում և կարող են տրամադրվել Հաճախորդներին Բանկի մասնաճյուղերում:

2.6. Բանկի և Երաշխավորի միջև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 29-րդ գլխով սահմանված պայմանագրի կազմմանը ներկայացվող պայմանագրի ձևի և էական պայմանների պահպանմամբ կնքվում է Երաշխավորության գրավոր պայմանագիր:

2.7 Երաշխավորության պայմանագիրը կնքված, իսկ դրա գրավոր ձևը պահպանված է համարվում Բանկի կողմից Երաշխավորին ակցեպտ պարունակող նամակը Բանկի կողմից Առաջարկ-դիմումում նշված էլեկտրոնային հասցեին ուղարկելու պահից:

2.8 Երաշխավորությունը դադարում է Վարկային պայմանագրից բխող պարտավորությունն ամբողջ ծավալով կատարման պահից, Բանկի կողմից միակողմանիորեն՝ Երաշխավորին Երաշխավորության պարտավորություններից ազատելու մասին ծանուցում ուղարկելու դեպքում, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

2.9 Երաշխավորության պայմանագրից բխող Երաշխավորի կողմից կատարված ցանկացած վճարում ուղղվում է Վարկային պայմանագրից բխող պարտքերի մարմանը, որոնց հերթականությունը որոշում է Բանկը:

	LI 75-16-01-02	
	Պետական ծրագրի շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ կառավարության առընթեր ազգային անվտանգության ծառայության և ՀՀ ոստիկանության սպայական անձնակազմերին կենցաղային տեխնիկայի ձեռքբերման նպատակով վարկերի տրամադրման կանոններ	Խմբագրություն՝ 01 Ուժի մեջ է՝ 04.05.2016թ.

2.10 Վարկային պայմանագրից բխող պարտավորությունը կատարած Երաշխավորին են անցնում այդ պարտավորությամբ Բանկի իրավունքները այն չափով և ծավալով, որով Երաշխավորը բավարարել է Բանկի պահանջը:

2.11 Վարկային պայմանագրից բխող պարտավորությունն Երաշխավորի կողմից ամբողջ ծավալով կատարվելուց հետո Բանկը Վարկառուի հանդեպ ունեցած իր պահանջը հավաստող փաստաթղթերը հանձնում և այդ պահանջն ապահովող իրավունքները Երաշխավորին է փոխանցում Երաշխավորի գրավոր պահանջով: Բանկը պատասխանատվություն չի կրում սույն կետին համապատասխան պահանջ չներկայացնելու կամ ուշ ներկայացնելու արդյունքում Երաշխավորի կրած վնասների համար:

ԲԱԺԻՆ 3. ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ

3.1. Վարկը Վարկառուին տրամադրվում է Պայմաններով սահմանված նպատակով:

3.2. Վարկառուին Վարկը տրամադրվում է Հաճախորդի Առաջարկ-դիմումում նշված գումարի չափով,

Անվանական տոկոսով և դրանում նշված մարման վերջնաժամկետով, ընդ որում, Վարկը Վարկառուին տրամադրելուց հետո Բանկն առանց Վարկառուի լրացուցիչ համաձայնության (կարգադրության) փոխանցում է Կազմակերպության բանկային հաշվին:

3.3. Վարկը և Վարկի օգտագործման համար հաշվարկված (կուտակված) տոկոսագումարները Վարկառուի կողմից մարվում (վճարվում) է Վարկային պայմանագրի անբաժանելի մասը կազմող Ընթացիկ ժամանակացույցով (գրաֆիկով)՝ Պայմաններին համապատասխան: Ընթացիկ ժամանակացույցը Վարկառուին ուղարկվում է ակցեպտ պարունակող նամակի հետ միասին՝ միևնույն եղանակով:

3.4. Վարկն ամբողջությամբ կարող է մարվել Վարկային պայմանագրով նախատեսված ժամկետից շուտ, որի համար Բանկը որևէ պատասխանատվության միջոցներ կամ Վարկառուի վիճակը վատթարացնող ցանկացած այլ միջոցներ չի կիրառում:

3.5. Վարկի և տոկոսագումարների մարումը (վերադարձնելը) կարող են կատարվել ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ եղանակով:

3.6. Անվանական տոկոսը վերանայվում (փոփոխվում) է, եթե՝

ա) Վարկն օգտագործվել է ոչ նպատակային. այս դեպքում Անվանական տոկոսը սահմանվում է ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկի չափով.

բ) Ընկերությունը չի վերաֆինանսավորում Վարկը. այս դեպքում Անվանական տոկոսը սահմանվում է ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկի չափով,

գ) Անվանական տոկոսի սուբսիդավորումը Ընկերության կողմից մերժվում կամ դադարեցվում է. այս դեպքում Անվանական տոկոսը սահմանվում է ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկի չափով,

դ) Պայմաններով սահմանված ժամկետում Ընկերությունը Բանկին հատկացվող վարկի տոկոսադրույքը վերանայում է: Ընդ որում, եթե Բանկին հատկացվող վարկի տոկոսադրույքը սահմանվում է հին տոկոսադրույքից ցածր, ապա Վարկի նոր տոկոսադրույքը նվազեցվում է առնվազն Բանկին Ընկերության կողմից հատկացվող հին և նոր տոկոսադրույքների տարբերության չափով: Իսկ եթե Բանկին հատկացվող վարկի տոկոսադրույքը սահմանում է հին տոկոսադրույքից բարձր, ապա Վարկի նոր տոկոսադրույքը կարող է բարձրացվել առավելագույնը Բանկին Ընկերության կողմից հատկացվող հին և նոր տոկոսադրույքների տարբերության չափով:

Սույն կետում նշված հանգամանքների հիման վրա Կողմերի Վարկային պայմանագրով նախօրոք տրված փոխադարձ համաձայնությամբ Անվանական տոկոսը համարվում է վերանայված (փոփոխված), և Անվանական տոկոսի չափի մասին Բանկը գրավոր ծանուցում է Վարկառուին, ով պարտավորվում է անվերապահորեն ու անառարկելիորեն Վարկի օգտագործման մնացած ժամանակահատվածի համար Բանկին վճարել վերանայված (փոփոխված) չափով տոկոսներ:

 Ardshinbank	LI 75-16-01-02	
	Պետական ծրագրի շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության և ՀՀ ոստիկանության սպայական անձնակազմերին կենցաղային տեխնիկայի ձեռքբերման նպատակով վարկերի տրամադրման կանոններ	Խմբագրություն՝ 01 Ուժի մեջ է՝ 04.05.2016թ.

Սույն կետում նշված Անվանական տոկոսով տոկոսագումարների հաշվարկումը (կուտակումը) սկսվում է դրանում նշված հանգամանքներն Բանկի համար ի հայտ գալուն հաջորդող ամսվա առաջին աշխատանքային օրվանից, որի վերաբերյալ Բանկը ծանուցում է Վարկառուին՝ ծանուցումը ուղարկելով Վարկառուի՝ Բանկում գրանցված էլեկտրոնային փոստի հասցեին և (կամ) փոստի միջոցով՝ ոչ ուշ, քան համապատասխան փոփոխությունը տեղի ունենալուց և Բանկի կողմից տեղեկանալուց 7 աշխատանքային օր հետո: Անվանական տոկոսի փոփոխության չափը հաշվարկվում է մարման (վերադարձման) ենթակա Վարկի մնացորդի նկատմամբ:

3.7. Վարկառուի կողմից Վարկային պայմանագրով նախատեսված յուրաքանչյուր ամսվա հերթական վճարումը (Վարկի տվյալ ամսում մարման ենթակա գումար և Սուբսիդավորման գումարի հաշվին չֆինանսավորվող տոկոսներ) կատարելուց հետո Բանկը Վարկառուին հասանելիք տվյալ ամսվա Սուբսիդավորման գումարն ուղղում է Վարկի գծով այդ ամսվա տոկոսագումարի վճարմանը:

Վարկառուին հասանելիք տվյալ ամսվա Սուբսիդավորման գումարի չափը հաշվարկվում է համաձայն Տոկոսների սուբսիդավորման կարգի: Ընդ որում, յուրաքանչյուր ամսվա Սուբսիդավորման գումարի հաշվարկման համար հիմք է վերցվում Վարկի փաստացի մնացորդի վրա հաշվարկված կամ Ընթացիկ ժամանակացույցով (գրաֆիկով) մարման ենթակա տոկոսագումարներից նվազագույնը:

3.8. Սուբսիդավորման ենթակա տոկոսագումարի չափը հաշվարկվում է Վարկի գումարի նվազող մնացորդի նկատմամբ:

3.9. Տույժերը և տուգանքները սուբսիդավորման ենթական չեն:

3.10. Սուբսիդավորման գումարը չի տրամադրվում, եթե Բանկի կողմից Ընկերությանը տոկոսների սուբսիդավորման հայտի ներկայացման օրվա դրությամբ տվյալ Վարկի գծով առկա են ժամկետանց պարտավորություններ:

3.11. Եթե Վարկառուն Վարկային պայմանագրով նախատեսված հերթական (ամսական) վճարումը կատարում է սահմանված ժամկետից շուտ, ապա Բանկը Վարկառուին հասանելիք տվյալ ամսվա Սուբսիդավորման գումարը ուղղում է Վարկի գծով այդ ամսվա տոկոսագումարի վճարմանը Վարկային պայմանագրով նախատեսված հերթական (տվյալ ամսվա) վճարման օրը:

3.12. Եթե Վարկառուն Վարկային պայմանագրով նախատեսված հերթական (ամսական) վճարումը կատարում է սահմանված ժամկետից ուշ, ապա Բանկը Վարկառուին հասանելիք տվյալ ամսվա Սուբսիդավորման գումարը ուղղում է Վարկի գծով այդ ամսվա տոկոսագումարի վճարմանը Վարկառուի կողմից կատարված փաստացի վճարման օրը:

3.13. Վարկառուի կողմից Վարկի ամբողջ գումարը վաղաժամկետ մարելու (վերադարձնելու) կամ Կանոնների **3.14** կետով նախատեսված դեպքերում սուբսիդավորումից զրկվելու դեպքում Բանկը Տոկոսների սուբսիդավորման կարգի համաձայն հետ է փոխանցում Սուբսիդավորման գումարները ՀՀ ֆինանսների նախարարությանը:

3.14. Սուբսիդավորման գումարի տրամադրումը վաղաժամկետ դադարեցվում է հետևյալ հիմքերով՝

3.14.1. Վարկառուի դիմումի համաձայն, որի մասին Բանկը 2 բանկային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում է Ընկերությանը.

3.14.2. Վարկային պայմանագրի վաղաժամկետ լուծման (դադարման) դեպքում, որի մասին Բանկը 2 բանկային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում է Ընկերությանը.

3.14.3. Վարկային պայմանագրի գործողության ընթացքում ի հայտ են եկել ներկայացված

3.14.4. տեղեկությունների կեղծիքներ, Վարկն օգտագործվել է ոչ նպատակային և (կամ) այն այլևս չի հանդիսանում Հատուկ վարկային ծրագրի պահանջներին և Ընկերության ներքին կարգերով սահմանված պահանջներին (չափանիշներին) բավարարող և վերջինիս կողմից իր միջոցներով վերաֆինանսավորված վարկ.

3.14.5. Վարկառուի կողմից Վարկի գծով իր պարտավորությունները պարբերաբար (3 հերթական վճարում) Չկատարելու դեպքում:

3.15. Կանոնների **3.14** կետում նշված հիմքերի բացահայտման դեպքում Բանկը Վարկառուին հասանելիք Սուբսիդավորման գումարի մնացորդը հինգ բանկային օրվա ընթացքում հետ է փոխանցում ՀՀ ֆինանսների նախարարությանը:

	LI 75-16-01-02	
	Պետական ծրագրի շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ կառավարության առընթեր ազգային անվտանգության ծառայության և ՀՀ ոստիկանության սպայական անձնակազմերին կենցաղային տեխնիկայի ձեռքբերման նպատակով վարկերի տրամադրման կանոններ	Խմբագրություն՝ 01 Ուժի մեջ է՝ 04.05.2016թ.

3.16. Եթե Վարկային պայմանագրում և (կամ) Կանոններում և (կամ) Պայմաններում նշված ժամկետները համընկնում են հանգստյան և (կամ) ոչ աշխատանքային օրերին, ապա այդ ժամկետների ավարտման օր է համարվում Բանկի համար հաջորդ աշխատանքային օրը, որի ընթացքում Վարկառուն պարտավոր է պատշաճ կատարել Վարկային պայմանագրով Բանկի հանդեպ ստանձնած պարտավորություններն ամբողջությամբ:

3.17. Վարկի տրամադրումն արտացոլվում է Վարկառուի վարկային հաշվում: Վարկի ստացումը հավաստվում է Կազմակերպության բանկային հաշվին Վարկի վճարման հանձնարարականով կամ նրա բանկային հաշվից տրված քաղվածքով: Վարկի տրման ամսաթիվ է հանդիսանում Կազմակերպության բանկային հաշվին Վարկի փոխանցման ամսաթիվը և (կամ) վարկային հաշվում վարկային պարտավորության ծագման ամսաթիվը:

3.18. Այն դեպքում, երբ Վարկառուի կողմից Վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունները խախտելու հետևանքով Բանկի հանդեպ ձևավորվում են կետանցված (ժամկետանց) պարտավորություններ և դրանք մարելու համար վճարված գումարները բավարար չեն, ապա դրանք մարվում են ներքոհիշյալ հերթականությամբ.

3.18.1. ժամկետանց Անվանական տոկոսի վրա հաշվարկված (կուտակված) տուժազումար.

3.18.2. ժամկետանց Վարկի վրա հաշվարկված (կուտակված) տոկոսագումար.

3.18.3. ժամկետանց Անվանական տոկոսով հաշվարկված (կուտակված) տոկոսագումարներ.

3.18.4. ժամկետանց Վարկ.

3.18.5. Անվանական տոկոսով հաշվարկված (կուտակված), սակայն դեռևս վճարման ժամկետը չլրացած (ժամկետային) տոկոսագումարներ.

3.18.6. մարման (վերադարձման) ժամկետը չլրացած (ժամկետային) Վարկ:

3.19. Վարկային պայմանագրով Վարկառուի դրամական պարտավորությունները կարող են կատարվել երրորդ անձանց կողմից:

ԲԱԺԻՆ 4. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Բանկն իրավունք ունի՝

4.1.1. Կանոնների 2.3 կետում նշված ժամկետում և ծանուցման կարգով ակցեպտավորել կամ մերժել Հաճախորդի Առաջարկ-դիմումով տրված Վարկային պայմանագիր կնքելու առաջարկը.

4.1.2. Վարկի և տոկոսագումարների մարման (վճարման) ժամկետներին համապատասխան, ինչպես նաև Վարկային պայմանագրի խախտմամբ Վարկառուի կողմից պարտքեր ձևավորելու դեպքում անակցեպտ կարգով՝ առանց վերջինիս լրացուցիչ հանձնարարությունների (կարգադրությունների), գանձել պարտքի գումարները Վարկառուի Բանկում գտնվող բանկային հաշիվներից.

4.1.3. Կանոններով նախատեսված հիմքերի առկայության դեպքում ցանկացած ժամանակ Վարկառուից պահանջել վաղաժամկետ կատարել Վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունները լրիվ ծավալով.

4.1.4. Վարկառուի կողմից Վարկային պայմանագիրը խախտելու դեպքում դրա կատարումը պահանջել Երաշխավորից՝ ներկայացնելով գրավոր ծանուցում.

4.1.5. Երաշխավորի կողմից Վարկային պայմանագիրը չկատարվելու դեպքում դրանով Վարկառուի կողմից ձևավորված պարտքը անակցեպտ կարգով՝ առանց Երաշխավորի լրացուցիչ հանձնարարության, գանձել Երաշխավորի իր մոտ գտնվող բանկային հաշիվներից.

4.1.6. Հատուկ վարկային ծրագրի շրջանակներում սուբսիդավորում ստացած Վարկառուների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրել Ընկերությանը՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը տրամադրելու համար:

4.2. Բանկը պարտավոր է՝

4.2.1. Վարկը տրամադրելու դեպքում այն փոխանցել Կազմակերպության բանկային հաշվին.

4.2.2. Վարկառուին հասանելիք Սուբսիդավորման գումարն ուղղել Վարկի գծով տոկոսագումարի Սուբսիդավորման գումարի մասով վճարմանը:

 Ardshinbank	LI 75-16-01-02	
	Պետական ծրագրի շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ կառավարության առընթեր ազգային անվտանգության ծառայության և ՀՀ ոստիկանության սպայական անձնակազմերին կենցաղային տեխնիկայի ձեռքբերման նպատակով վարկերի տրամադրման կանոններ	Խմբագրություն՝ 01 Ուժի մեջ է՝ 04.05.2016թ.

4.2.3. Վարկային պայմանագիրը Երաշխավորի կողմից կատարվելու դեպքում Երաշխավորին՝ վերջինիս պահանջով, փոխանցել այդ պարտավորություններով իր իրավունքներն այն ծավալով, որով Երաշխավորը բավարարել է իր պահանջները:

4.3. Վարկառուն իրավունք ունի՝

4.3.1. Ժամկետից շուտ կատարել (մարել) Վարկային պայմանագրով Բանկի նկատմամբ ստանձնած պարտավորությունները.

4.3.2. առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու Վարկային պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում (մտածելու ժամանակ):

4.4. Վարկառուն պարտավոր է՝

4.4.1. Վարկն օգտագործել բացառապես Կանոնների 3.1 կետում նշված նպատակներով.

4.4.2. Վարկային պայմանագրին համապատասխան և դրանում նշված ժամկետներում մարել (վերադարձնել) Վարկը, վճարել հաշվարկված (կուտակված) տոկոսագումարները և Վարկավորման պայմաններով, Բանկի սակագներով նախատեսված դեպքերում՝ այլ վճարները.

4.4.3. Վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման կետանց թույլ տալու դեպքում Բանկին վճարել Վարկային պայմանագրով նախատեսված տուժանքը և տոկոսները.

4.4.4. Վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունները վաղաժամկետ կատարելու մասին Բանկի գրավոր պահանջն ստանալուց հետո Կանոններում նշված ժամկետում վաղաժամկետ ու ամբողջությամբ կատարել պարտավորությունները:

4.5. Երաշխավորն իրավունք ունի՝

4.5.1. Վարկառուի փոխարեն Վարկային պայմանագիրը կատարելուց հետո Բանկից գրավոր պահանջել իրեն փոխանցել Վարկային պայմանագրով Բանկի իրավունքներն այն ծավալով, որով ինքը բավարարել է Բանկի պահանջները.

4.5.2. հետադարձ պահանջ ներկայացնել Վարկառուին, եթե Վարկային պայմանագիրը կատարված է եղել նաև Վարկառուի կողմից և վերջինս այդ մասին իրեն չի տեղեկացրել:

4.6. Երաշխավորը պարտավոր է՝

4.6.1. Բանկի՝ Կանոնների 4.1.4 կետում նշված ծանուցումն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում Վարկառուի փոխարեն կատարել Վարկային պայմանագիրը, անկախ իր կողմից Վարկառուին նախագուշացնելու հանգամանքից.

4.6.2. Վարկային պայմանագիրն ուժի մեջ մնալու ընթացքում առանց Բանկի գրավոր համաձայնության չօտարել Երաշխավորության պայմանագրի կնքման պահին առկա սեփականության իրավունքով իրեն պատկանող ակտիվները (անշարժ և շարժական գույք, գույքային իրավունքներ, պահանջներ և այլն):

4.7 Առաջարկ-դիմումի ստորագրմամբ Վարկառուն և Երաշխավորը տալիս են իրենց համաձայնությունը Բանկին բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները և իրեն վերաբերող այլ ցանկացած տեղեկատվություն և փաստաթուղթ բացահայտել՝

4.7.1 Վարկային պայմանագրով վարկառուի ստանձնած պարտավորությունների կատարման ապահովում տրամադրած երրորդ անձին (անձանց)՝ գրավատու(ներ)ին, Երաշխավոր(ներ)ին և այլն,

4.7.2 Բանկին ֆինանսավորող կամ վերաֆինանսավորող կազմակերպություններին,

4.7.3 Վարկային և Երաշխավորության պայմանագրերի հիման վրա Բանկին պատկանող իրավունքը (պահանջը) այլ անձի փոխանցելիս (զիջելիս) այդ իրավունքը ձեռք բերող անձին,

4.7.4 քրեական հետապնդման մարմիններին, եթե նման բացահայտումն անհրաժեշտ է Բանկի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար,

4.7.5 դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության մարմիններին՝ կատարողական թերթի կատարման և պահանջների առաջնահերթ բավարարում ստանալու համար,

4.7.6 պետական լիազոր մարմիններին (այդ թվում օտարերկրյա պետական լիազոր մարմիններին) և/կամ վերջինիս կողմից նշված անձանց, եթե դա իրականացվում է Վարկառուի և/կամ Երաշխավորի՝ օրենքով(այդ թվում

	LI 75-16-01-02	
	Պետական ծրագրի շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ կառավարության առընթեր ազգային անվտանգության ծառայության և ՀՀ ոստիկանության սպայական անձնակազմերին կենցաղային տեխնիկայի ձեռքբերման նպատակով վարկերի տրամադրման կանոններ	համբազրություն՝ 01 Ուժի մեջ է՝ 04.05.2016թ.

օտարերկրյա օրենսդրությամբ) ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու, պարտավորությունների պատշաճ կատարումը ապահովելու, այդ պարտավորությունների ցանկացած փոփոխությունը բացահայտելու նպատակով և դրա շրջանակներում:

ԲԱԺԻՆ 5. ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԱԺԱՄԿԵՏ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

5.1. Ստորև նշված դեպքերում, Բանկն իր հայեցողությամբ կարող է, Վարկառուին նախապես գրավոր տեղեկացնելով, պահանջել պարտավորությունների վաղաժամկետ և ամբողջական կատարում (ներառյալ տոկոսագումարները և տուժանքը) կամ չտրամադրել վարկը, եթե՝

5.1.1. Վարկառուն Պայմաններով և Կանոններով կարգավորվող հարաբերությունների շրջանակում չի կատարել կամ անպատշաճ է կատարել օրենքով կամ Վարկային պայմանագրով սահմանված որևէ պարտավորություն՝ ներառյալ Պայմանագրի համաձայն տրված Բանկի ծանուցման (ծանուցագրերի) պահանջները, կամ

5.1.2. սկսված որևէ դատական կամ իրավական այլ գործընթացը կամ իրադրության այլ փոփոխությունը կասկածի տեղիք է տալիս, որ Վարկառուն ի վիճակի կլինի ժամանակին վճարել Բանկին ունեցած պարտքերը, ադպիսիք են համարվում, բայց սրանով չեն սահմանափակվում հետևյալ դեպքերը.

5.1.2.1. Վարկառուի ակտիվները կամ դրանց մի զգալի մասը անհատույց կամ իր համար էականորեն ոչ շահավետ պայմաններով փոխանցվել են կամ հնարավոր է, որ կփոխանցվեն երրորդ անձանց,

5.1.2.2. Վարկառուի ակտիվների (գույքի) կամ դրանց մի զգալի մասի վրա օրենքով սահմանված կարգով կալանք կամ արգելանք է դրվել կամ հնարավոր է, որ կդրվի,

5.1.2.3. դատարանը Վարկառուին ճանաչել է սնանկ (անվճարունակ) կամ նրա նկատմամբ սկսվել է սնանկության վարույթ,

5.1.2.4. Վարկառուն կետանցված պարտավորություններ ունի Բանկի, այլ ֆինանսական հաստատությունների (այլ բանկեր, վարկային կազմակերպություններ, ապահովագրական ընկերություններ և այլն), պետական կամ համայնքային բյուջեների հանդեպ,

5.1.2.5. Վարկառուի ֆինանսական վիճակը վատթարացել է կամ առկա են նման միտումներ, կամ

5.1.3. Վարկի սպասարկման ընթացքում հայտնաբերվել են Վարկառուի և (կամ) Երաշխավորի կողմից տրամադրված կեղծ կամ մոլորեցնող կամ անարժանահավատ տեղեկություններ, կամ

5.1.4. Ընկերության կողմից Վարկը չի ֆինանսավորվել կամ դադարեցվել է Վարկի ֆինանսավորումը:

Սույն կետում նշված խախտումները և հանգամանքների փոփոխությունները Բանկի համար ճանաչվում են էական: Վերը նշված հանգամանքներն ի հայտ գալու պահից Բանկն իրավունք ունի պարտավորությունների վաղաժամկետ և ամբողջական կատարում պահանջել Վարկառուից անկախ նրանից, վաղաժամկետ կատարում պահանջելու պահին թույլ տրված խախտումները վերացվել են, թե ոչ:

5.2. Կանոնների 5.1 կետում նշված հանգամանքներն ի հայտ գալու դեպքում Բանկը գրավոր ծանուցում է Վարկառուին պարտավորությունների վաղաժամկետ և ամբողջական կատարման (ներառյալ տոկոսագումարների և տուժանքի վճարման) մասին:

5.3. Վարկառուն պարտավոր է Վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների վաղաժամկետ և ամբողջական կատարման պահանջի վերաբերյալ Բանկի ծանուցումն ստանալուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծանուցման մեջ այլ ժամկետ նշված չէ, առանց որևէ հրաժարումների ամբողջությամբ վաղաժամկետ մարել (վերադարձնել) տրված, սակայն չվերադարձված Վարկն ամբողջությամբ՝ փաստացի մարման (վերադարձման) օրվա դրությամբ հաշվարկված (կուտակված) տոկոսագումարների և տուժանքի հետ միասին: Եթե Վարկառուն այդ ժամկետում Վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների վաղաժամկետ և ամբողջական կատարման Բանկի պահանջը չի կատարում կամ կատարում է անպատշաճ, ապա բոլոր վճարները՝ ներառյալ Վարկն ու հաշվարկված (կուտակված) տոկոսագումարները, ամբողջությամբ համարվում են ժամկետանց, իսկ Վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունները խախտված, որոնց համար Վարկառուն պատասխանատվություն է կրում Վարկային

 Ardshinbank	LI 75-16-01-02	
	Պետական ծրագրի շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ կառավարության առընթեր ազգային անվտանգության ծառայության և ՀՀ ոստիկանության սպայական անձնակազմերին կենցաղային տեխնիկայի ձեռքբերման նպատակով վարկերի տրամադրման կանոններ	Խմբագրություն՝ 01 Ուժի մեջ է՝ 04.05.2016թ.

պայմանագրով նախատեսված կարգով, պայմաններով ու չափերով:

ԲԱԺԻՆ 6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Կանոնները և Պայմանները կարող են Վարկային պայմանագրի գործողության ընթացքում Բանկի կողմից միակողմանիորեն փոփոխվել կամ լրացվել, որոնք Բանկի հետ մինչև փոփոխված կանոնների և պայմանների հրապարակումը Վարկային և Երաշխավորության պայմանագիր կնքած անձանց համար ուժի մեջ են մտնում դրանց հրապարակման ամսաթվին հաջորդող 7-րդ աշխատանքային օրը, իսկ նոր հաճախորդների համար՝ հրապարակման պահից, եթե Բանկի կողմից փոփոխություններն ուժի մեջ մտնելու առավել ուշ ժամկետներ չեն սահմանվում: Ընդ որում՝ հրապարակման ամսաթիվ է համարվում Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում դրանց տեղադրման ամսաթիվը: Վարկառուն և Երաշխավորը իրավունք ունեն հրաժարվել նշված փոփոխություններից և լրացումներից մինչև դրանց ուժի մեջ մտնելը՝ սույն կանոններով սահմանված կարգով ամբողջությամբ կատարելով Վարկային և Երաշխավորության պայմանագրերով ստանձնած պարտավորությունները, իսկ Վարկային պայմանագրի ժամկետի փոփոխման և (կամ) սահմանաչափի ավելացման դեպքում՝ պահանջելով չկիրառել այդ փոփոխությունը իրենց նկատմամբ: Եթե Վարկառուն և/կամ Երաշխավորը մինչև փոփոխությունների ու լրացումների ուժի մեջ մտնելը չեն կատարում Վարկային և Երաշխավորության պայմանագրերով ստանձնած պարտավորությունները, ապա դրանից ծագած հարաբերությունների նկատմամբ լրիվ և ամբողջական ծավալով տարածվում են կատարված փոփոխություններն ու լրացումները:

6.2. Կնքված Վարկային պայմանագիրը գործում է մինչև Վարկառուի կողմից Վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջությամբ և պատշաճ ծավալով կատարումը:

6.3. Երաշխավորությունը տրվում է մինչև պարտապանի կողմից Հիմնական պարտավորությամբ ստանձնած պարտավորությունների՝ ամբողջությամբ և պատշաճ կատարումը:

6.4 Վարկային պայմանագրից բխող պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Վարկառուն և/կամ Երաշխավորը Բանկին՝ վերջինիս պահանջով վճարում է Պայմաններով սահմանված տույժը և/կամ տուգանքը:

6.5 Վարկային պայմանագրով և (կամ) Կանոններով պահանջվող կամ նախատեսվող ցանկացած պահանջ, ծանուցում կամ այլ հաղորդում պետք է լինի գրավոր ձևով, ստորագրված լինի այն ուղարկող կողմի լիազորված անձի կողմից և պետք է ուղարկվի մյուս կողմի իրեն հայտնի վերջին հասցեով՝ ցրիչի կամ փոստային առաքման միջոցով կամ վերջին հայտնի էլեկտրոնային փոստի հասցեից մյուս կողմի իրեն հայտնի վերջին էլեկտրոնային փոստի հասցեին: Սույն կետով նախատեսված վերջին հայտնի հասցեներ, այդ թվում վերջին հայտնի էլեկտրոնային փոստի հասցեներ են համարվում Առաջարկ-դիմումում նշված հասցեները, իսկ Կանոնների 6.8-րդ կետով նախատեսված դեպքում համապատասխան կողմի կողմից մյուս կողմին վերջին անգամ ծանուցված իր փոստային հասցեն (գտնվելու, բնակության, հաշվառման վայրը, էլեկտրոնային փոստի հասցեն): Օրենքով կամ Վարկային պայմանագրով նախատեսված ցանկացած անհապաղ ծանուցում պետք է մյուս կողմին ուղարկվի ոչ ուշ, քան 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում:

Բանկի ցանկացած պահանջ, ծանուցում կամ այլ հաղորդում, որն ուղարկվում է ցրիչի կամ փոստային առաքման միջոցով մյուս կողմի վերջին հայտնի հասցեին, համարվում է Վարկառուի և/կամ Երաշխավորի կողմից պատշաճ ստացված (հանձնված) նշված կարգով ուղարկման պահից սկսած յոթերորդ օրը, թեկուզև հետագայում պարզվի, որ Վարկառուն և/կամ Երաշխավորը նշված ծանուցումը փաստացի չի ստացել, բացառությամբ այն դեպքերի, երբ հասցեատերը համապատասխան պահանջը, ծանուցումը կամ այլ հաղորդումը ստացել է մինչև յոթօրյա ժամկետը լրանալը: Պահանջի, ծանուցման կամ այլ հաղորդման ուղարկման օրը որոշվում է Բանկի ելքային ամսաթվով կամ փոստի ծառայություններ մատուցող կազմակերպության դրոշմակնիքով:

Բանկի ցանկացած պահանջ, ծանուցում կամ այլ հաղորդում, որն ուղարկվում է մյուս կողմի վերջին հայտնի էլեկտրոնային փոստի հասցեին, համարվում է Վարկառուի և/կամ Երաշխավորի կողմից պատշաճ ստացված նշված կարգով ուղարկման պահից սկսած յոթերորդ օրը, կամ նշված յոթօրյա ժամկետում համապատասխան պահանջը, ծանուցումը կամ այլ հաղորդումը ուղարկված էլեկտրոնային փոստի հասցեին պահանջը, ծանուցումը կամ այլ

	LI 75-16-01-02	
	Պետական ծրագրի շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության և ՀՀ ոստիկանության սպայական անձնակազմերին կենցաղային տեխնիկայի ձեռքբերման նպատակով վարկերի տրամադրման կանոններ	Խմբագրություն՝ 01 Ուժի մեջ է՝ 04.05.2016թ.

հաղորդումը ստանալու մասին հավաստում ուղարկելու պահից: Պահանջի, ծանուցման կամ այլ հաղորդման ուղարկման օրը որոշվում է պահանջը, ծանուցումը կամ այլ հաղորդումը պարունակող էլեկտրոնային նամակի ուղարկման օրով:

6.6 Վարկային և Երաշխավորության պայմանագրերի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են Կողմերի միջև կնքված համաձայնագրերին համապատասխան:

6.7. Կողմերը պայմանավորվում են, որ Վարկային և Երաշխավորության պայմանագրերի կապակցությամբ ծագած վեճերի հետ կապված ցանկացած թղթակցություն, դատական կամ արբիտրաժային ծանուցում, այդ թվում՝ դատավարական կամ արբիտրաժային փաստաթուղթ, ուղարկվում են Վարկային և Երաշխավորության պայմանագրերում նշված հասցեներով և համարվում են հասցեատիրոջ կողմից ստացված (հանձնված), թեկուզև հասցեատերն այդ հասցեում այլևս չի գտնվում կամ չի բնակվում, եթե Կանոնների 6.8 կետին համապատասխան միմյանց գրավոր չեն հայտնել իրենց փոստային հասցեները (գտնվելու, բնակության, հաշվառման վայրերի, էլեկտրոնային փոստի հասցեների) փոխելու մասին:

Վարկառուն և (կամ) Երաշխավորը հնարավորություն ունեն Վարկային և (կամ) Երաշխավորության պայմանագրերից բխող բոլոր-պահանջները ներկայացնել ՀՀ ֆինանսական համակարգի հաշտարարին՝

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, դեպքերում ու պայմաններով:

6.8. Կողմերը պարտավորվում են 3 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել միմյանց փոստային հասցեների (գտնվելու, բնակության, հաշվառման վայրերի, էլեկտրոնային փոստի հասցեների), ինչպես նաև այլ վավերապայմանների փոփոխությունների մասին: Ընդ որում էլեկտրոնային փոստի հասցեների փոփոխության դեպքում ծանուցումը ուղարկվում է ծանուցումը ստացող կողմին վերջին հայտնի հասցեից: Փոփոխությունների մասին մյուս կողմին չիրազեկելու իրավական հետևանքների ռիսկը կրում է իրազեկելու պարտավորություն կրող կողմը: Փոփոխությունների մասին մյուս կողմ(եր)ին չիրազեկելու իրավական հետևանքների ռիսկը կրում է իրազեկելու պարտավորություն կրող անձը:

6.9 Վարկառուն և (կամ) Երաշխավորը պատասխանատու են օրենսդրությամբ, Վարկային պայմանագրով և (կամ) Երաշխավորության պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար անկախ մեղքի բացակայությունից և անհաղթահարելի ուժի ազդեցությունից: